



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳԵՏ ՓՐՈՓ. ՍԵՂԱ ՏԱՏՈՅԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, 11 Օգոստոսի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը ծանօթ մտաւորական, պատմագետ ու արուեստաբան Փրոֆ. Սեղա Տատոյեանի, որ հիւրաբար Լոս Անճելըս կը գտնուի:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց յարգելի մտաւորականը, որ ստուար վաստակ ունի գիրի ու համալսարանական կալուածներուն մէջ, եղած է դասախօս Քոլումպիայի, Միչիկընի, Շիքակոյի, Լոս Անճելըսի եւ Չարվըրտի համալսարաններուն մէջ, հեղինակած է շարք մը հատորներ, նաեւ՝ սերտօրէն գործակցած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ, աշխատակցելով «Չասկ»ին: Խորհրդակցութեան նիւթ եղան ընդհանրապէս հայագիտութեան կալուածին առնչուող հարցեր, մեր պատմութիւնն ու մշակոյթը ժողովուրդին սեփականութիւնը դարձնելու միջոցները: Առաջնորդ Սրբազանը իր կարգին որոշ տեղեկութիւններ հաղորդեց Ազգ. Առաջնորդարանի աշխատանքի ասպարեզներուն մասին, կանգ առնելով նաեւ հայկական վարժարաններու առաքելութեան ու գործունեութեան վրայ:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց յարգելի հիւրին:

### PRELATE WELCOMES SCHOLAR PROF. SETA DADOYAN

On Wednesday, August 11<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy scholar Prof. Seta Dadoyan, who is currently in Los Angeles on a brief visit.

Prof. Dadoyan is a renowned scholar and author of a number of books and articles, and has taught at prestigious universities including Columbia, Harvard, and universities in Michigan, Chicago, and Los Angeles. She has also worked closely with the Catholicosate of Cilicia as a contributor to the HASK official publication of the Catholicosate. The discussion mainly centered on Armenian studies and means of educating the Armenian people on our history

and culture. The Prelate briefed Prof. Dadoyan on the general endeavors of the Prelacy and the mission and activities of our schools.

The meeting concluded with the Prelate presenting a memento to Prof. Dadoyan.